

## **ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**Մովսիսյան Դիանա Իվանի**

**ՀԱՍԿԱՑՈՒՄ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԲԱՅԵՐԻ  
ԻՄԱՍՏԱԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ  
(ՀԱՅԵՐԵՆԻ ԶՈՒԳԱԴՐՈՒԹՅԱՄԲ)**

**Ժ.02.07 - «Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ  
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի  
հայցման ատենախոսության**

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**Երևան-2018**

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական դեկան՝	բ.գ.դ., պրոֆեսոր Ե. Լ. Երզնկյան
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	բ.գ.դ., պրոֆեսոր Ա. Ս. Հովհաննիսյան բ.գ.թ., դոցենտ Գ. Ռ. Հարությունյան
Առաջատար կազմակերպություն՝	Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2018թ. սեպտեմբերի 12-ին՝ ժամը 12:30-ին, ՀՀ ԲՈԿ-ի՝ Երևանի պետական համալսարանում գործող 009 «Օտար լեզուներ» մասնագիտական խորհրդում (հասցե՝ 0025, Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2018 թ. օգոստոսի 8-ին:

Մասնագիտական խորհրդի

գիտական քարտուղար,

բ.գ.դ., պրոֆեսոր՝

Ե. Լ. Երզնկյան

Ե. Լ. Երզնկյան

Լեզվի և լեզվական միավորների քննությունը ճանաչողական լեզվաբանության լուսի ներքո բավականին մեծ հետաքրքրություն է ներկայացնում հետազոտողների շրջանում: Նման հետազոտությունների արդյունքում հնարավոր է դառնում մարդու ճանաչողական համակարգը և մարդու մտածելակերպն արտացոլող տարբեր ճանաչողական կաղապարների վերհանումը: Լեզվաբանական ուսումնասիրությունների արդի փոփոյ լեզվական երևոյնների հետազոտության միտումներից է տարբեր ճանաչողական-իմացական գործընթացների և երևոյնների քննությունը: Դրանց շարքում են բացատրությունը, մեկնաբանությունը, ընկալումը, հասկացումը և այլն:

Հասկացման նկատմամբ հետաքրքրությունն աճել է 20-րդ դարի երկրորդ կեսին՝ պայմանավորված ճանաչողական գործընթացների և տեքստի մեկնաբանության, տեքստի կապակցվածության խնդրի վերաբերյալ հետազոտությունների ընդլայնմամբ: Խոսքի հասկացումը բոլոր հասարակություններում տարբեր հարցերի լուծման, միջանձնային հարաբերությունների կարգավորման, հաջողված հաղորդակցության ցուցիչ է: Հետազոտողների՝ հասկացման նկատմամբ հետաքրքրությունը պայմանավորված է նրանով, որ այն բարդ երևոյթ է: Այն հաղորդակցության հիմքն է, իսկ յուրաքանչյուր հաղորդակցություն փոխանցում է որոշակի իմաստ, ենթադրում է խսորի կողմից որևէ մտադրություն: Հասկացումն այդ իմաստի և մտադրության բացահայտումն է:

Ատենախոսությունը նվիրված է անգլերեն հասկացում արտահայտող բայերի իմաստային և գործարանական հատկանիշների ուսումնասիրությանը, ինչը նաև թույլ է տալիս պատկերացում կազմել հասկացման գործընթացի, մարդու ճանաչողական համակարգի կառուցվածքի և առանձնահատկությունների մասին:

Հետազոտության **օբյեկտը** հասկացում արտահայտող բայերն են որպես հասկացման տարբեր տեսակների ամբողջություն:

Հետազոտության **առարկան** հասկացման մտավոր գործընթացն է:

Ընտրված թեմայի **արդիականությունը** պայմանավորված է հետևյալ հանգամանքներով:

ա) հասկացումը որպես երևոյթ ճանաչողական լեզվաբանության ուշադրության կենտրոնում է, քանի որ այն հենքային ճանաչողական գործընթաց է, հասկացում արտահայտող բայերի իմաստագործարանական հատկանիշների նկարագրությունը թույլ կտա վեր հանել նաև մարդու ճանաչողական համակարգի առանձնահատկությունները, մասնավորապես հասկացման գործընթացի նկարագրության միջոցով տարբեր տեսանկյուններից կիմնավորվի լեզվի նյութականացվածության մասին դրույթը,

թ) հասկացման գործնթացի ուսումնասիրությունը, լինելով ժամանակակից լեզվաբանության ամենավիճակարույց հարցերից, պահանջում է համակարգված ու համակողմանի վերլուծություն, որը մանրամասնորեն և տարբեր դիտանկյուններից կրնութագրի տվյալ մտավոր գործնթացի առանձնահատկությունները, իրականացման բնույթը:

Աստենախոսության **նպատակն** է տալ անգերեն հասկացում արտահայտող բայերի իմաստային, գործարանական և ճանաչողական բնութագիրը, ինչպես նաև նկարագրել հասկացման գործնթացի իրականացման անհրաժեշտ նախապայմանները, բացահայտել հասկացման տարբեր տեսակներ, ներկայացնել հասկացման հետ զուգորդվող երևույթները և ցույց տալ, թե ինչպես են այդ երևույթները հարաբերակցվում հասկացման գործնթացի հետ:

Այդ նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ **խնդիրները**.

ա) ուսումնասիրել հասկացում արտահայտող բայերի սահմանումները և վեր հանել բայերին բնորոշ իմաստային հատկանիշները՝ հիմնվելով հեղինակավոր բացատրական բառարանների վրա,

թ) ուսումնասիրել հասկացում արտահայտող բայերի տարբեր համատեքստեր՝ բայերի ինչպես իմաստային, այնպես էլ գործարանական առանձնահատկությունների վերհանման նպատակով,

գ) վեր հանել ուսումնասիրվող բայերի իմակների ամբողջությունը՝ բառարանային սահմանումների և համատեքստերի համադրման միջոցով,

դ) որոշարկել և բնութագրել բայերի միջոցով արտահայտված հասկացման մակարդակը,

ե) համակարգել և խմբավորել ուսումնասիրվող բայերն ըստ իմաստային միկրոդաշտերի՝ հիմնվելով իմաստագործարանական հատկանիշների վրա,

զ) տալ հասկացման գործնթացի ամբողջական բնութագիրը՝ համադրելով և համեմատելով իմաստային և գործարանական հատկանիշները:

Թվարկված խնդիրների լուծման համար կիրառվել են հետևյալ **մեթոդները**՝ իմակային վերլուծության, համատեքստային վերլուծության և զուգադրական վերլուծության մեթոդները:

Աշխատանքի **մեթոդաբանական հիմքի** առումով առանցքային են իմաստաբանության, ճանաչողական լեզվաբանության, գործարանական լեզվաբանության, իմացարանության, տեքստի մեկնաբանության<sup>1</sup> տարբեր

<sup>1</sup> Sweetser E.E. *From Etymology to Pragmatics. Metaphorical and Cultural Aspects of Semantic Structure*. Cambridge: Cambridge University Press, 1991; Wierzbicka A. *Semantics: Primes and Universals*. New York: Oxford University Press, 1996; Потебня А.А. *Мысль и язык*. Харьков:

տեսություններ, մոտեցումներ և վարկածներ, որոնք այս կամ այն կերպ առնչվում են հասկացման բայերի և հասկացման գործընթացի քննությանը:

Ասենախոսության **գիտական նորույթը** այն է, որ առաջին անգամ կատարվել է հասկացում արտահայտող բայերի համապարփակ ուսումնասիրություն՝ հիմնվելով ճանաչողական լեզվաբանության դրույթների վրա, տրվել է հետազոտության շրջանակներում ընդգրկված բոլոր բայերի իմաստային և գործարանական բնութագիրը, արդյունքում հասկացում արտահայտող բայերի միջոցով վեր են հանվել հասկացման գործընթացի ճանաչողական կաղապարները:

Ասենախոսության **տեսական նշանակությունը** պայմանավորված է հետազոտության եզրակացությունների ու արդյունքների հետանկարյանությամբ, մասնավորապես՝ լեզվաբանության այն ոլորտների համար, որոնց ուշադրության կենտրոնում են հասկացման գործընթացին, բայց իմաստագործաբանական բնութագրին, մարդու ճանաչողական համակարգին առնչվող հարցերը: Ձեռք բերված արդյունքները որոշակի ներդրում են այդ տեսությունների ընդույնման գործում:

Ասենախոսության **գործնական արժեքը** կապված է հետազոտության արդյունքների լայն կիրառական հնարավորությունների հետ: Դրանք կարող են օգտագործվել բառագիտության, իմաստաբանության, ճանաչողական լեզվաբանության, գործարանական լեզվաբանության, ընդհանուր լեզվաբանության դասընթացներում ու սեմինարներում, ինչպես նաև կուրսային և ավարտական աշխատանքներ, մագիստրոսական թեզեր և գիտական հոդվածներ գրելին:

Հասկացում արտահայտող բայերի ուսումնասիրության համար որպես **փաստական նյութ** օգտագործվել են բառարանային սահմանումներ՝ մոտ 30 հետինակավոր բացատրական բառարաններից, քաղվել են համատեքստեր Բրիտանական ազգային կորպորացից<sup>2</sup>, Արևելահայերենի ազգային կորպորացից<sup>3</sup>

---

Типография Адольфа Дарре, 1892; Lakoff G., Johnson M. *Metaphors We Live by*. London: the University of Chicago Press, 2003; Apel K.-O. *Understanding and Explanation: A Transcendental-Pragmatic Perspective*. Cambridge, Massachusetts, London: the MIT Press, 1984; Апресян Ю.Д. *Дейксис в лексике и грамматике и наивная модель мира* // Семиотика и информатика, № 28. Москва: ВИНИТИ РАН, 1986; Ерзинкян Е.Л. *Дейксис слова: семантика и прагматика*. Ереван: Издательство ЕГУ, 2013; Kvanvig J.L. *The Value of Knowledge and the Pursuit of Understanding*. New York: Cambridge University Press, 2003; Grimm S. *Is Understanding a Species of Knowledge?* // British Journal for the Philosophy of Science, № 57. Oxford University Press, 2006; Дильтей В. Герменевтика и теория литературы (собранние сочинений, том 4) // Михайлова А.В., Плотникова Н.С. (ред.) Москва: Дом интеллектуальной книги, 2001; Gadamer H.-G. *Philosophical Hermeneutics*. Berkeley and Los Angeles, California: University of California Press, 2008.

<sup>2</sup>Տե՛ս British National Corpus (BNC) // URL: <http://corpus.byu.edu/bnc/>

<sup>3</sup>Տե՛ս Eastern Armenian National Corpus (EANC) // URL: <http://www.eanc.net/>

և գրական որոշ ստեղծագործություններից: Ուսումնասիրված համատեքստերի ընդիհանուր թիվը կազմում է մոտ 15000:

Աստենախոսությունը կազմված է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Աստենախոսության առաջին գլուխը՝ «Հասկացումը լեզվաբանական ուսումնասիրությունների համատեքստում», բաղկացած է երեք Ենթագլխից, որտեղ հասկացումը դիտարկվում է ճանաչողական լեզվաբանության, իմաստաբանության և գործաբանական լեզվաբանության տեսությունների լույսի ներքո:

Առաջին Ենթագլխում՝ «Հասկացումը ճանաչողության գործընթացում», ներկայացվում են հասկացման գործընթացը կազմող փուկերը: Ցույց է տրվում, որ հասկացումը բարդ մտավոր գործընթաց է, այն դիտարկվում է որպես տարրեր ճանաչողական գործընթացների ամբողջություն, որոնք չունեն սահմանված հաջորդականություն, և կախված հասկացման տեսակից և հաղորդակցության մասնակիցների հիմնարար գիտելիքներից՝ արտահայտում են հասկացման տարրեր մակարդակներ:

Անդրադարձ է կատարվում մեկնաբանությանը՝ որպես հասկացման նշորդի: Կատարվում է հետևյալ դիտարկումը. Եթե հասկացման գործընթացը բաղկացած է գիտելիքի փոխանցումից, ապա դրան հաջորդում է այդ նոյն գիտելիքի՝ լսողի, խոսակցի կամ ընթերցողի իմաստավորումը՝ մեկնաբանությունը: Իմաստավորումը հասկացման բաղկացուցիչ մաս է, որը որոշակի «անվանում» է տայիս երևոյթին: Նշենք նաև, որ իմաստավորման փուզը մի կողմից անհատական է հաղորդակցության յուրաքանչյուր մասնակցի համար, մյուս կողմից այն սահմանում է հասկացման խորությունը՝ մակարդակը: Մեկնաբանությունը հասկացման բարձրագույն մակարդակն է՝ հասկացման գործընթացի վերջին փուկերից մեկը:

Երկրորդ Ենթագլխում՝ «Հասկացումը ճանաչողական իմաստաբանության դիրքերից», ցույց է տրվում, որ լեզվի մակարդակում հասկացումը նյութական արտահայտություն է ստանում. բայի՝ հասկացման բայի իմաստային կառուցվածքն արտացոլում է մարդու աշխարհընկալումը և ճանաչողական համակարգը: Հղում կատարելով տարրեր լեզվաբանների տեսակետներին՝ հիմնավորվում է, որ հասկացումը՝ որպես վերացական հասկացություն, սահմանվում է կոնկրետ հասկացությունների միջոցով, այսինքն՝ նյութականացված է: Հասկացման դեպքում ֆիզիկական փորձառությունը դառնում է մտավոր փորձառության հիմքը. տեսողության և լույսի, լսելու, շոշափման, շարժման, խոսքի և հաղորդակցության գաղափարն արտահայտող իմաստային դաշտերից նկատվում է անցում դեպի հասկացման իմաստային դաշտ:

Երրորդ ենթագլխում՝ «Հասկացման լեզվագործաբանական իմաստավորումը», հասկացումը բնութագրվում է որպես գործաբանական երևոյթ, ինչը հիմնավորվում է մի քանի փաստարկներով:

Ինչպես հայտնի է, հասկացումը յուրաքանչյուր հաղորդակցության հիմքն է, իսկ յուրաքանչյուր հաղորդակցման առանցքային բաղադրիչը մարդն է: Մտավոր այս գործունեությունը զուգորդվում է մարդու հետ, ուստի մարդը այն կենտրոնն է, որը մի կողմից իրականացնում է հաղորդակցությունը և հասկանում, մյուս կողմից հասկացման բայերի միջոցով արտահայտում իր հասկացումը, ընկալումը, համաձայնությունը և անհամաձայնությունը:

Հասկացումը երկխոսական բնույթ ունի: Դա նշանակում է, որ գոյություն ունի առնվազն մեկ խոսող և խոսակից, իսկ հասկացումը խոսողի կողմից խոսակցին, ինչպես նաև խոսակցի կողմից խոսողին ուղղված գործընթաց է: Այլ կերպ ասած՝ հասկացման ենթակա նյութի վերաբերյալ ակնկալվում է խոսակցի կողմից համարժեք պատասխան: Հասկացման գործընթացի հիմքում մարդկային գործոնն է: Թե՛ խոսողը, թե՛ խոսակիցը հասկացման գործընթացին ներգրավում են իրենց կարծիքը, վերաբերմունքը, հոյզերը, զգացմունքները, գնահատումները: Այն ֆաստը, որ յուրաքանչյուր հասկացում հիմնված է երկխոսության վրա, ենթադրում է, որ այն անխուսափելիորեն զուգորդվում է որևէ իրավիճակ՝ լայն իմաստով համատեքստի հետ: Աշխատանքում առանձնացվում են հասկացման հետևյալ լեզվագործաբանական բաղադրիչները՝ իրավիճակ, փոխադարձ կապ, մտադրություն, գիտելիք, վերաբերմունք, հոյզ, գնահատում:

Առենախոսության երկրորդ գոլիսը՝ «Անգերեն հասկացում արտահայտող բայերի իմաստագործաբանական առանձնահատկությունները», բաղկացած է վեց ենթագլխուց, որտեղ տրվում է հասկացում արտահայտող բայերի ճանաչողական, իմաստային և գործաբանական բնութագիրը:

Սուաջին ենթագլխում՝ «Հասկացումը որպես ճշմարտության բացահայտում», հասկացման բայերի ուսումնասիրության միջոցով վեր է հանվում ճշմարտության և հասկացման միջև գոյություն ունեցող սերտ կապը, ինչը թույլ է տալիս ճշմարտության հանգելը սահմանել որպես հասկացման գործընթացի հիմնական նպատակ:

Հասկացման բայերի սահմանումներում հատուկ անդրադարձ է կատարվում ճշմարտությանը: Օրինակ՝ *fathom* բայը սահմանվում է որպես *penetrate to the truth of*, իսկ *penetrate* բայը՝ որպես *arrive at the truth or meaning of*: Ճշմարտության գաղափարը կենտրոնական է նաև տեսողական բայերի

<sup>4</sup> Տե՛ս Random House Webster's Unabridged Dictionary, 2<sup>nd</sup> edition. New York: Random House, Inc., 1997 // URL: <http://www.dictionary.reference.com/>; Random House Kernerman Webster's College

սահմանումներում: Այսպես, *see* բայց սահմանվում է որպես *confirm the truth of*<sup>5</sup>, *read* բայց՝ որպես *accept the truth of someone's statements*<sup>6</sup>:

Ճշմարտությունն իր արտահայտությունն է գտնում նաև հասկացում արտահայտող բայերի խոսքային գործածություններում. *fathom the truth, penetrate to the truth, dig for truth, get at some truth, see the truth, truth is viewed:*

Ուստիմասիրության արդյունքները ցուց են տալիս, որ ճշմարտության ընկալումը հասկացման գործընթացի նպատակն է, ճշմարտությունը՝ հասկացման գործընթացի ուղենիշը:

Այդ իսկ պատճառով առանձնացվում են որոշ ճանաչողական կաղապարներ, որոնք կազմում են ճշմարտության գաղափարի հիմքը.

ա) լեզվում ճշմարդության հասկացությունը քողարկված է, արտահայտվում է որպես անհասանելի, դժվարամատչելի երևույթ,

բ) ճշմարտության բացահայտումը պահանջում է որոշակի ժամանակ, շանք, աշխատանք, ուստիմասիրություն, հետազոտություն, ըմբռնելի չէ առաջին փորձից, ուղեկցվում է տարբեր տեսակի դժվարություններով,

գ) անգիրեն լեզվամտածողության մեջ ճշմարդությունը խորքային հասկացություն է, դա ենթադրում է, որ մակերեսային ամեն ինչ զոկված է բռվանդակությունից, ճշմարտություն չի պարունակում, հետևաբար այն հասկանալու, ընկալելու կամ ըմբռնելու անհրաժեշտություն չկա,

դ) լեզվում ճշմարտությունն արտահայտված է *փարողության (container)* տեսքով, ինչը թույլ է տալիս նշել, որ հասկացման գործընթացը գոյաբանական փոխաբերության վառ օրինակ է. ճշմարտությունը ներկայանում է որպես ինքնուրույն տարածական իրականություն, այդ իսկ պատճառով ճշմարտության բացահայտման համար այնտեղ պետք է մուտք գործել, դա հիմնավորվում է հասկացում արտահայտող բայերին հաջորդող հետևյալ մակրայներով ու նախդիրներով՝ *deep, deeper, further, further to, beyond, behind, in, to, into, out, towards, out, out towards, for, out for, up, through:*

Ընդգծված մակրայներն ու նախդիրները ոչ միայն հաստատում են, որ ճշմարտությունը լեզվում արտահայտվում է տարողության տեսքով, այլև ուրվագծում են մտավոր շարժման հետագիծը, շարժման բնույթը և վերջնակետը:

Երկրորդ ենթագլուխում՝ «Շարժումը հասկացման բայերի իմաստային կառուցվածքում», որպես առաջին ենթագլխի շարունակություն՝ շարժման գաղափարը դիտարկվում է իր ամենալայն իմաստով, շարժման իմակը ներկայացվում է որպես անգիրենի հասկացում արտահայտող բայերի

Dictionary, Random House, Inc., 2010, 2005, 1997, 1991 // URL: <http://www.kdictionaries-online.com; http://www.thefreedictioanry.com/>

<sup>5</sup> Տե՛ս URL: <http://www.vocabulary.com/>

<sup>6</sup> Տե՛ս Random House Kernerman Webster's College Dictionary, Random House, Inc., 2010, 2005, 1997, 1991 // URL: <http://www.kdictionaries-online.com; http://www.thefreedictioanry.com/>

առանցքային իմաստային բաղադրիչ: Տարբեր խոսքային գործածությունների ուսումնասիրության միջոցով հիմնավորվում է այն վարկածը, որ հասկացման գործընթացը շարունակական շարժում է: Առանձնացվում են բայերի երկու միկրոդաշտեր, որոնք ներառում են ուղղահայաց (*empathize, fathom, penetrate, bottom, dig, reach*) և հորիզոնական շարժում (*follow, get, draw*) արտահայտող հասկացման բայեր: Հասկացման բայերի իմաստային կառուցվածքում շարժման գաղափարի այսպիսի վառ արտահայտվածությունը մեկ անգամ ևս վկայում է այն մասին, որ լեզվում հասկացումը սահմանվում է՝ հիմնվելով ֆիզիկական փորձի վրա, ինչն իր հերթին արտացոլում է մտածողության առանձնահատկությունները: Այդ իսկ պատճառով հասկացումը մի կողմից սահմանվում է որպես մտավոր ուղղահայաց շարժում, մյուս կողմից՝ որպես մտավոր հորիզոնական շարժում, որի նպատակը ճշմարտության բացահայտումն է: Ուստի հասկացումը, ի դեմք հասկացման բայերի փոխաբերաբար նկարագրվում է որպես մարդու շարժումը դեպի ճշմարտությունը:

Վերահմաստավորելով շարժման գաղափարը՝ հասկացում արտահայտող այս բայերը դասվում են ցուցայնական լեզվամիավորների շարքին: Ինչպես հայտնի է, ցուցայնությունը սահմանվում է որպես ցուցում որևէ ելակետի (անձի, երևույթի, տեղի, ժամանակի և այլն), որոնց նկատմամբ կատարվում է անվանարկում: Այդ ելակետը՝ ցուցայնության կենտրոնը, ցուցայնական միավորներին բնորդություն կարևորագույն հատկանիշներից է, որը Կ. Բյուլեն անվանում է **Origo**: Origo-ն այն ուղենիշն է, որի նկատմամբ տեղի է ունենում մարդու կողմնորոշումը տարածության և ժամանակի մեջ<sup>7</sup>:

Որպես ցուցայնական բառեր՝ ուսումնասիրվող բայերով արտահայտված հասկացման ձևերը հարաբերակցվում են ցուցայնության կենտրոնի՝ գործողության վերջնակետի՝ «ճշմարտության» բացահայտման հետ՝ ըստ այդմ ունենալով հասկացման տարբեր մակարդակներ: Խորը հասկացումը կամ հասկացման բարձր մակարդակը վկայում է ճշմարտության բացահայտման մասին: Ուսումնասիրվող բայերի դեպքում հասկացման ամբողջ գործընթացը գրգռորդվում է ինչպես ճշմարտության, այնպես էլ ճշմարտության բացահայտման մասնակի դրսւությունների հետ: Այս համատեքստում ճշմարտությունն անվանել ենք ցուցայնության կենտրոն<sub>1</sub> (Origo<sub>1</sub>), իսկ ճշմարտության մասնակի դրսւությունը՝ ցուցայնության կենտրոն<sub>2</sub> (Origo<sub>2</sub>):

Դիտարկենք որոշ օրինակներ.

<sup>7</sup> Bühler K. *Theory of Language: The Representational Function of Language*. Amsterdam: John Benjamins Publishing Company, 2011; Երզնիկյան Ե.Լ. *Дейксыс слова: семантика и pragmatika*. Ереван: Издательство ЕГУ, 2013, стр. 85-86.

*I think in that report I bottomed the depth of human stupidity. (BNC, Murray, David Christie)*

*...in the recognition that your own children cannot fathom the depth of your love – you come to understand the tragic, unrequited love of your own parents. (BNC, Freitod, 1996)*

Այլ կերպ ասած՝ առաջին դեպքում արտահայտված մտավոր շարժման ավարտին ցուցանության սուբյեկտի դիրքն ամբողջությամբ համընկնում է ցուցանության կենտրոնի դիրքի հետ: Հասկացումը տեղի է ունենում, հետևաբար ցուցանության սուբյեկտը և ցուցանության կենտրոն-ը (Origo<sub>1</sub>) վերացական տարածական իրականության մեջ որոշ խոչընդուների ու դժվարությունների հաղթահարումից հետո նոյն կետում են հայտնվում: Երկրորդ դեպքում ցուցանության սուբյեկտը գործողության ավարտին բավականին մեծ հեռավորության վրա է գտնվում «ճշմարտություն» ցուցանության կենտրոնից (Origo<sub>1</sub>):

Ամբողջական, լիարժեք հասկացում տեղի չունենալու դեպքում ցուցանության սուբյեկտը հնարավոր է հանգի ցուցանության կենտրոն-ին, այնուամենայնիվ, մտավոր շարժման որոշակի հետագիծ կառաջանաւ:

*To follow this argument beyond this level, however, is more problematic. (BNC, Studying popular music, 1993)*

Ինչպես երևում է բերված օրինակից, գործողության սուբյեկտը հնարավոր է ամբողջությամբ չհանգի ցուցանության կենտրոն-ին, այնուամենայնիվ, մտավոր շարժման որոշակի հետագիծ կառաջանաւ:

Հասկացումը շարժում է վարկածը հաստատվում է նաև հայերենի նյութի միջոցով. Նշենք, որ հասկանալ բայի հոմանիշների շարքում առնչվում ենք նաև այսպիսի հարադիր բայերի՝ իսելքը մկնել, իսելքին հասնել, իսելքը կտրել, իսելքում նստել, գլխի ընկնել, գլուխը մկնել, գլխին հասնել, գլխում նստել, գլխում ծագել, ականջը մկնել և այլն<sup>8</sup>: Հոմանիշների այդ շարքին ավելացվում է նաև տարբեր համատեքստերում հասկացում արտահայտող իսելքի գալ հարադիր բայը: Հոմանիշային շարքի հպանցիկ այս ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ հայերենում հասկացումը առավելապես հորիզոնական ուղղվածություն ունի. մկնել, հասնել, գալ բայերն արտահայտում են հորիզոնական շարժում: Նշենք նաև, որ հայերենում հասկացման գործընթացի գլխավոր դերակատարությունը ստանձնում են «իսելքը», «գլուխը», «ականջը», դրանք այն «տարողություններն» են, որտեղ «պահվում» է, որտեղ մուտք է գործում հասկացումը, որին մոտենում է համապատասխան բովանդակությունը:

Ցուցանության կենտրոնը տվյալ դեպքում համընկնում է մտավոր շարժման վերջնակետի հետ, իսկ ցուցանության կենտրոնը բերված

<sup>8</sup> Տե՛ս Սութիայան Ա. Հայոց լեզվի հոմանիշների բացադրական բառարան, 2-րդ հրատարակություն, Երևան, Երևանի պետական համալսարան, 2009, էջ 597:

օրինակներում խելքը, գլուխը, ականջն է: Դրանց նկատմամբ ունեցած հարաբերակցությամբ, դիրքորոշմամբ, հեռավորությամբ որոշարկվում է մտավոր շարժման՝ հասկացման գործնրացի տեղի ունենալը կամ չունենալը: Մտավոր շարժումը՝ հասկացումը, համարվում է հաջողությամբ ավարտված, եթե համապատասխան բովանդակությունը «մրել է խելքը», «հասել է խելքին», «կպրել է խելքը», «նսրել է խելքում», «խելքին մոտ է եկել» և այլն: Խոսքային գործածությունները ցոյց են տախո, որ ի տարբերություն անգիրենի համարժեքների՝ ոչ թե շարժում է իրականացվում դեպի բովանդակություն, այլ բովանդակությունն է իրականացնում այդ շարժումը:

Ենթագլխում շարժման իմակով անգիրենի հասկացման բայերը զուգադրվում են համապատասխան հայերենի համարժեքների հետ: Աշխատանքում կատարվում է այն դիտարկումը, որ անգիրենում ընդգծվում է մտավոր շարժման ուղղվածությունը (հորիզոնական կամ ուղղահայաց), մինչդեռ հայերենում այն որոշ չափով ստանում է մարմնային (սումատիկ) արտահայտություն ևս: Նշվում է, որ անգիրենում և հայերենում շարժման միկրոդաշտի բայերի հիմքում ինչպես ճանաչողական, այնպես էլ գոյարանական փոխարերությունն է: Սակայն գոյաբանական փոխարերության արտահայտվածությունը անգիրենի հասկացման բայերի դեպքում ավելի ներակայված է, մինչդեռ հայերենի հասկացման բայերի դեպքում այն ուղղակիրուն է արտահայտված բայերի իմաստային կառուցվածքում:

Հասկացումը բնութագրվում է որպես երկողմանի՝ ուղղահայաց և հորիզոնական ուղղվածությամբ գործնրաց: Առաջին դեպքում գերակայում են հասկացման հետ զուգորդվող գնահատումները, երկրորդ դեպքում՝ վերաբերմունքը: Ուղղահայաց ուղղվածությամբ շարժումը ենթադրում է հասկացման «խորություն»՝ երևույթի խորը ընկալում, հորիզոնական ուղղվածությամբ շարժումը՝ հասկացման դիրքը, «հեռավորություն»՝ երևույթի վերաբերյալ դիրքորոշում, այլ կերպ ասած՝ մտահորիզոնի ընդլայնում: Ուղղահայաց և հորիզոնական մտավոր շարժման միաձուման արդյունքում խորանում և ընդլայնվում են հասկացման սահմանները:

Երրորդ ենթագլխում՝ «Տեսողական ընկալումը որպես հասկացման նախապայման», հիմնավորվում է այն վարկածը, որ ցուցայնությունը հատուկ է նաև հասկացում արտահայտող այն բայերին, որոնց համար առանցքային է տեսողական ընկալման իմակը: *Տեսողության իմակով see, read, view* հասկացում արտահայտող բայերի ցուցայնությունը կախված է նրանից, թե «հասկացման նպատակն» ինչ աստիճանով է ներթափանցում «հասկացման սուբյեկտի» մտավոր տեսադաշտ կամ «հասկացման սուբյեկտի» տեսադաշտում ընդգրկված է արդյոք «հասկացման նպատակը»: Հասկացման մակարդակը, հետևաբար, կախված է «տեսադաշտում» ընդգրկված լինելու, հեռու կամ մոտ լինելու աստիճանից:

Ընդ որում վերացական մտավոր տեսադաշտը՝ հասկացման տեսադաշտը, ձևավորվում է տեսնելով՝ մասնավորապես լուսի առկայության պարագայում.

*With this she knocked away the snow from the lettering but then found she couldn't make out the words in the dark. (BNC, The Challenge book of brownie stories, 1988)*

*In the dim light it was difficult to make out the illustration. (BNC, The highest science, 1993)*

Ավելացնենք նաև, որ *see, read, view* բայերով արտահայտված հասկացման գործընթացը հնարավոր է դառնում միայն ինչ-որ շրջանակների սահմաններում՝ *see/read/view in the light – see something in its true light, read in the light of knowledge then available, view in the same light*. Նշված շրջանակների միջոցով ուրվագծվում է «մտավոր տեսադաշտ»: Հասկացումը տեղի է ունենում միայն այդ տեսանկյունից, այդ դիրքից: Գործողության սույցելուն, ինքն իրեն տեղադրելով այդ դիրքում, իր մտավոր տեսադաշտի համար հասանելի/տեսանելի է դարձնում հասկացման ենթակա նյութը:

Չորրորդ ենթագլխում՝ «Հասկացումը շոշափման զգայական փորձի դիտանկյունից», անդրադարձ է կատարվում հասկացման և շոշափման ֆիզիկական փորձի փոխկապակցվածությանը: Առանձնացվում են շոշափողական ընկալման վրա հիմնված հասկացման երկու միկրոդաշտեր՝ հասկացումը որպես ընկալում (*accept, take, perceive, conceive*) և հասկացումը որպես ըմբռնում (*comprehend, apprehend, seize, grasp, catch*): Առաջին դեպքում հասկացման հիմքում վերցնելու ֆիզիկական փորձն է, երկրորդ դեպքում՝ բռնելու ֆիզիկական փորձը:

Հասկացում արտահայտող բայերի օրինակով ներկայացվում է, որ հասկացումը նյութականացված է. այն հիմնված է զգայական փորձի վրա՝ ի դեմս տեսնելու, լսելու, շոշափելու զգայական փորձերի: Զգայական փորձը հասկացման գործընթացի հրականացման նախապայմանն է:

*Now the sensing person, prefers to use her five senses to perceive what's going on about her. (BNC, Career's guidance: seminar, 1993)*

*She could hardly take in all the sights and sounds of Bombay<sup>9</sup>.*

*For as classy, clever and well-spun as Twin Peaks is, it makes the mistake of presuming the viewer will watch and listen and perceive. (BNC, The face, 1990)*

Հատկապես մեծ կարևորություն է ներկայացնում տեսնելու ուսակությունը: Տեսնելու հասկանալու նախապայմանն է: Տեսնելու զգայական փորձը հատուկ է հասկացում արտահայտող բայերի մեծ մասին:

Ենթագլխի շրջանակներում անդրադարձ է կատարվում այն իրողությանը, որը հասկացումը ոչ միայն զգայական, այլև հոգական-

<sup>9</sup> Տե՛ս The Wordsmyth English Dictionary-Thesaurus // URL: <http://www.wordsmymth.net/>

զգացական գործընթաց է, քանի որ հասկացումն անմիջականորեն զուգորդվում է գործողության սուբյեկտի՝ իրավիճակի/հաղորդվող տեղեկատվության **դրական և բացասական գնահատման** հետ՝ *accept as true, accept as fundamental, take as an act of aggression, take as its best emblem:*

Քննարկվում են նաև այլ խոսքային գործածություններ, որոնք կրկին անգամ հաստատում են, որ հասկացումն ունի գնահատողական բնույթ՝ *accept that something is anomalous, artificial, accept that unanimity is a near impossibility, accept that it could be unnatural death:* Հասկացման բայերի միջոցով արտահայտվում է այնպիսի երևոյթների հասկացում, որոնք խոսողի կողմից դրական կամ բացասական են գնահատվում: Կարելի է նկատել նաև, որ արտացոլվում է խոսողի՝ հոգականությամբ և գնահատմամբ երանգավորված դրական կամ բացասական վերաբերմունքը:

Գնահատումներ են նաև հասկացման մակարդակը բնութագրող նշորդները: Օրինակ՝ *widely perceive, fully perceive, perceive well enough, conceive brilliantly, conceive clearly and distinctly, comprehend well, seize most fully, grasp properly and clearly:* Հասկացումը որակելով որպես այդպիսին՝ խոսողն արտահայտում է իր **գնահատումը:** Նշենք նաև, որ այդ գնահատումը կատարվում է՝ իմբրում ունենալով որևէ կետ: Եթե այդ կետի հետ հարաբերակցությամբ որոշարկվում է հասկացման մակարդակը: Այդ կետը տվյալ հատկանիշի նշաններ են, նորման է տվյալ հասարակությունում, մշակույթում: Ուստի նման գնահատումներն իրենց բնույթով հարաբերականորեն օբյեկտիվ են:

Հասկացումը զուգորդվում է **դրական և բացասական հոյզերի** հետ՝ *apprehend - anticipate with dread or anxiety<sup>10</sup>, anticipate with worry or dread<sup>11</sup>, look forward to with fear and uncertainty<sup>12</sup>, գրիունակությամբ ընկալել, խնդրության մի զգացումով ընկալել, ագրեսիվ, վրդովմունքով ընկալել, ընկալել հիվանդագիտ:*

Ուստի կատարվում է հետևյալ դիտարկումը. Եթե մի դեպքում հասկացման մակարդակը սահմանվում է գործողության «ելակետից մինչև վերջնակետն անցած ուղու երկարությամբ», ապա մեկ այլ դեպքում հասկացումն արտահայտված է ընդգծված գնահատողականության ու հոգականության միջոցով, իսկ հասկացման մակարդակը որոշվում է գնահատումների և հոյզերի արտահայտվածության խորությամբ:

<sup>10</sup> Տե՛ս URL: <http://www.vocabulary.com/>

<sup>11</sup> Տե՛ս American Heritage Dictionary of the English Language, 5<sup>th</sup> edition. Houghton Mifflin Harcourt Publishing Company, 2015 // URL: <https://www.ahdictionary.com/>

<sup>12</sup> Տե՛ս Merriam-Webster's Collegiate Dictionary, 11<sup>th</sup> edition. Merriam-Webster, Inc., 2003 // URL: <http://www.merriam-webster.com/>

Գնահատման և հույզի խորովայունը որոշվում է որոշակի նշանողի հետ հարաբերակցությամբ, ուստի ելնելով ցուցանության դրույթներից՝ հասկացման ցուցանական լինելո հիմնավորվում է մեկ այլ դիտանկյունից:

Հավելենք նաև, որ հուզականությունն այնպիսի մի ցուցիչ է, որը հաստատում է հասկացման իրականացումը: Հոյզերը, զգացմունքները վերջին հաշվով ստանում են ֆիզիկական արտահայտություն, այսինքն նյութականացվում են: Ուստի, գոյություն ունի զգայություն-հասկացում-զգացականություն շղթայական կապը: Զգայական փորձը հասկացման նախապայմանն է, իսկ հոյզերը/զգացմունքները՝ հասկացման նշորդներ: Ընդ որում, նյութականացված են թե՛ առաջինը, թե՛ երկրորդը:

Հինգերորդ ենթագլխում՝ «**Յուրացման իմաստ արտահայտող բայերը հասկացման գործընթացում**», խոր է գնում այն մասին, որ յուրացման իմակով հասկացման բայերի միջոցով արտահայտվում է «նորի» յուրացումը, «նորի» հասկացումը, դրա մասին է վկայում սահմանումներում և խոսքային գործածություններում ընդգծված *new* ածականի առկայությունը. *assimilate - if you assimilate new ideas, techniques, or information, you learn them or adopt them*<sup>13</sup>, *understand and remember new information and make it part of your basic knowledge so that you can use it as your own*<sup>14</sup>, *He assimilated many new experiences on his European trip*<sup>15</sup>; *absorb - learn and understand new facts, so that they become part of your knowledge, learn new skills or information*<sup>16</sup>; *digest - understand or assimilate (new information or the significance of something)*<sup>17</sup>, *think over and try to understand (news, information)*<sup>18</sup>:

Իմաստային այս դաշտի վերաբերյալ կատարվում է հետևյալ դիտարկումը՝ առնչվում ենք էմպասիայի դրսուրման: Ըստրինելով, որ ցուցանության կենտրոնը տվյալ դեպքում ճշմարտությունը, գիտելիքը կամ տեղեկությունն է, նշվում է, որ տեղի է ունենում նոյն ճշմարտության, գիտելիքի կամ տեղեկության շարժում դեպի գործողության սուրյեկտ՝ գիտելիքների ընդհանուր տարրություն: Այդ փուլում նոր գիտելիքը համադրվում է իին գիտելիքի հետ, նոյնականացվում ու որոշարկվում է

<sup>13</sup> Տե՛ս Collins COBUILD Advanced Learner's Dictionary, 8<sup>th</sup> edition, Glasgow: Harper Collins Publishers, 2014 // URL: <http://www.collinsdictionary.com/>

<sup>14</sup> Տե՛ս Cambridge Advanced Learner's Dictionary, 3<sup>rd</sup> edition. Cambridge University Press, 2008 // URL: <http://dictionary.cambridge.org/>

<sup>15</sup> Տե՛ս Random House Webster's Unabridged Dictionary, 2<sup>nd</sup> edition. New York: Random House, Inc., 1997 // URL: <http://www.dictionary.reference.com/>

<sup>16</sup> Տե՛ս Macmillan English Dictionary // URL: <http://www.macmillandictionary.com/>

<sup>17</sup> Տե՛ս Oxford Dictionary of English, 2<sup>nd</sup> edition, revised / Soanes C., Stevenson A. (eds.) Oxford: Oxford University Press, 2009 // URL: <http://www.oxforddictionaries.com/>


<sup>18</sup> Տե՛ս Merriam-Webster's Collegiate Dictionary, 11<sup>th</sup> edition. Merriam-Webster, Inc., 2003 // URL: <http://www.merriam-webster.com/>

տեղը ընդհանուր գիտելիքների համակարգում, տեղի է ունենում դասակարգում: «Նոր» գիտելիքը հայտնվում է «հին» գիտելիքների հետ միևնույն դաշտում: Այդ դաշտն ընդունելով որպես մեկ ընդհանուր կետ՝ մտավոր շարժման ավարտին «հին» գիտելիքը և «նոր» գիտելիքը հայտնվում են միևնույն կետում:

Վեցերորդ ենթագիսում՝ «Զփաստարկված իմաստ արտահայտող բայերը հասկացման գործնթացում», դիտարկվում են *assume, presume, gather, suppose* բայերը: Բայերի սահմանումների հիմքում ճշմարտության գաղափարն է, սակայն երևույթը համարվում է ճշմարիտ/ճիշտ՝ զուրկ լինելով փաստական հիմքից: Քննարկվող բայերով արտահայտված հասկացումը խոսքում հաճախ ներկայանում է որպես սեփական դատողություն, հետևողություն: Ուստի կատարվում է այն դիտարկումը, որ հասկացումը կամային բնույթ ունի: Գործողության սուբյեկտը հանգում է հասկացման (երբեմն նաև բարձր մակարդակի հասկացման)՝ ելելով իր կամքից, վերաբերմունքից, ցանկություններից և այլն:

Անգերեն նյութի ուսումնասիրությունը ցոյց է տալիս, որ նշված բայերով արտահայտվում է սուբյեկտիվ, երբեմն սխալ որակվող հասկացում: Գոյություն ունի որոշակի փոխկապակցվածություն՝ չփաստարկված հասկացման և հասկացման հետ զուգորդվող բացասական (հիմնականում) վերաբերմունքի, գնահատումների, հորդերի միջև. իմաստային այս հատկանիշները ստվորաբար միասին են դրսուրպվում:

Հասկացման վերաբերյալ ատենախոսության շրջանակներում քննարկված հիմնական դրույթներն ընդհանրացվում են հետևյալ գծապատկերի տեսքով.



Աշխատանքի արդյունքներն ամփոփվում են հետևյալ եզրահանգումներով:

1. Հասկացումը բարդ մտավոր գործընթաց է, որի տարաբնույթ և բազմաշերտ լինելը լեզվի մակարդակում հիմնավորվում է հասկացում արտահայտող բայերի իմաստային, ճանաչողական և գործարանական հատկանիշների բացահայտմամբ:

2. Առաջարկվում է հասկացման հետևյալ սահմանումը. հասկացումը ճշմարտության բացահայտում է: Ճշմարտությունն այն ուղենիշն է, որին հանգելու նպատակով տեղի է ունենում հասկացման գործընթացը:

3. Հասկացումը օբյեկտիվ բնույթ ունի: Հասկացման այս առանձնահատկությունն էլ ապահովում է ցանկացած հաղորդակցության կայացումը: Հասկացումը սկզբունքորեն հարաբերակցվում է մարդու հետ. այն մարդակենտրոն երևույթ է: Լինելով մարդակենտրոն՝ հասկացումն անխուսափելիորեն նաև սուբյեկտիվ բնույթ ունի: Հասկացման մեջ արտացոլված են ոչ միայն մարդու ճանաչողական համակարգը, այլև իրավիճակային-գործարանական տարրեր՝ վերաբերմունք, գնահատում, հույզեր, կարծիք, օգացմունքեր, որակումներ և այլն: Ուստի հասկացումը դիտարկվում է որպես հարաբերականորեն օբյեկտիվ երևույթ:

4. Հասկացումը նյութականացված է. այն հիմնված է օգայական փորձի վրա՝ ի դեմք տեսնելու, լսելու, շոշափելու օգայական փորձերի: Տեսողական ընկալման միջոցով, ինչպես նաև բավականաչափ լուսի առկայության դեպքում ծևակիրվում է հասկացման տեսադաշտը: Եթե հասկացման ենթակա նյութը մոտաք է գործում տվյալ վերացական, մտավոր տարածություն, գտնվում կամ տեղափորվում է այնտեղ, ապա տեղի է ունենում հասկացումը: Նույն կերպ հասկացումը տեղի է ունենում, եթե հասկացման ենթակա նյութն ընդգրկված է տվյալ լսողական դաշտում գտնվում է լսելիության սահմաններում:

5. Ատենախոսության մեջ հիմնավորվում է, որ հասկացումը շարժում է, որն անմիջականորեն զուգորդվում է ցուցայնության հետ: Շարժման գաղափարի վերածնակերպման արդյունքում հասկացման գործընթացը բնութագրվում է որպես գործողության սուբյեկտի կամ համապատասխան բովանդակության կողմից իրականացվող փոխարերական, վերացական շարժում: Հետևաբար, շարժում եզրույթը գործածելով իր ամենալայն իմաստով՝ աշխատանքում այն վերագրվում է հասկացում արտահայտող բոլոր բայերին: Հասկացման ցուցայնությունը հիմնավորվում է հասկացումը որպես շարժում ծևակերպման միջոցով: Հասկացման նմանատիպ նկարագրությունը մի կողմից ճանաչողական փոխարերության օրինակ է, մյուս կողմից արտացոլութիւն մասի և ամբողջ փոխհարաբերությունը՝ փոխանունության օրինակ է: Տվյալ դեպքում հասկացման ամբողջությունը

փոխարինվում է մասնավոր արդյունքով: Այդ իսկ պատճառով հասկացումը բնութագրվում է որպես փոխանվանական փոխարերության վառ դրսուրում:

6. Հասկացման ցուցանությունը հիմնավորվում է նաև զգացականության դիտանկյունից: Հասկացման գործընթացի հետ զուգորդվող հույզերը, գնահատումները, վերաբերմունքը նույնպես հարաբերակցվում են որոշակի նշանող՝ ելման կետի հետ: Հենց այդ կետի հարաբերակցությամբ գործողության սուբյեկտը որակում է, գնահատում է տվյալ բայով արտահայտված հասկացումը:

7. Համատեքստերում առկա մակրայների ու մակրայական արտահայտությունների միջոցով ուրվագծվում է մտավոր շարժման իրականացումը, որը ենթադրում է համապատասխան վերջնակետ: Տվյալ վերջնակետի դիրքն իր հերթին ուրվագծում է հասկացման խորությունը: Ըստ այդմ աշխատանքում առանձնացվում են հասկացման տարբեր աստիճաններ՝ ամբողջական և մասնակի հասկացում: Նշված երևույթը բնութագրվում է «հասկացման մակրդակ» եզրույթով:

8. Հասկացում արտահայտող անգլերեն բայերի իմաստային միկրոդաշտերի գուգադրումը համապատասխան հայերեն համարժեքների հետ ապահովում է հասկացման վերաբերյալ տարբեր դրույթների հավաստիությունը: Երկու լեզուներին հատուկ հասկացման ճանաչողական կաղապարները, տարբեր գերակայությամբ, հիմնականում համընկում են: Դա մասնավորապես վերաբերում է հասկացման նյութականացվածությանը՝ ի դեմս ճանաչողական, գոյաբանական և փոխանվանական փոխարերությունների: Անգլերեն և հայերեն հասկացում արտահայտող բայերի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ հասկացումը բացերի լրացում է: Համատեքստերի քանակական ըննությունը ցույց է տալիս, որ մարդու ճանաչողական համակարգը կառուցված է այնպես, որ հասկացումը գուգորդվում է ճշմարտության, խորության, բացասականության և դժվարությունների հայթահարման հետ:

Ասենախոսության հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. Sources of Polysemy in English and Armenian // Լեզուն և գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարցույցում, № 4, Երևան, ԵՊՀ, Լուսակն հրատարակչություն, 2012, էջ 144-155:
2. Polysemy in Context // Armenian Folia Anglistika. International Journal of English Studies, № 1-2 (10). Yerevan: YSU Press, 2012, pp. 53-59.
3. TO KNOW բազմիմաստ բայի գործածությունը Ջորջ Օրուելի «1984» վեպի անգլերեն և հայերեն տարբերակներում // Մեսրոպ Մաշտոց համալսարանի լրատու, Երևան, Լիմուշ հրատարակչություն, 2014, էջ 309-316:

4. *INTERPRET* բայի իմաստային բնութագիրը // «Օտար լեզուները բարձրագույն դպրոցում» գիտական հանդես, № 1 (16), Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2014, էջ 72-87:
5. Հասկացումը ճանաչողական լեզվաբանության դիտանկյունից // «Օտար լեզուները բարձրագույն դպրոցում» գիտական հանդես, № 1 (18), Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2015, էջ 89-98:
6. Հասկացում, մտավոր շարժում, ցուցայնություն // «Օտար լեզուները բարձրագույն դպրոցում» գիտական հանդես, № 1-2 (20), Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2016, էջ 48-61 (համահեղինակ՝ Ե. Երզնկյան):
7. Հասկացումը որպես ճշմարտության բացահայտում // «Օտար լեզուները բարձրագույն դպրոցում» գիտական հանդես, № 1-2 (20), Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2016, էջ 62-69 (համահեղինակ՝ Ե. Երզնկյան):
8. Հասկացումը զգայությունների համատեքստում // «Բանքեր Երևանի համալսարանի բանասիրություն», № 2, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2018, էջ 52-63 (համահեղինակ՝ Ե. Երզնկյան):

DIANA IVAN MOVSISYAN

**SEMANTIC AND PRAGMATIC FEATURES OF VERBS OF  
UNDERSTANDING IN ENGLISH  
(IN COMPARISON WITH ARMENIAN)**

**SUMMARY**

The study of linguistic units in the light of Cognitive Linguistics is of great interest since it enables the researchers to reveal cognitive models reflecting the organization of human cognition. The exploration of various mental processes and phenomena, such as explanation, interpretation, perception, understanding, is prospective in nowadays linguistics.

Understanding is the key to any kind of communication and the overall aim of any kind of communication. Each form of communication transfers certain meaning and presupposes certain intention. Hence, understanding is directly linked with “digging out” that message.

The **aim** of the thesis is to reveal the cognitive, semantic and pragmatic features of English verbs of understanding, describe the necessary preconditions defining the realization of the process of understanding, study some of the phenomena closely associated with that mental activity and figure out the extent of the effect of these phenomena on understanding.

The **relevance** of the research is preconditioned by the following:

a) understanding is in the mainstream of Cognitive Linguistics; since it is one of the most basic cognitive processes, the peculiarities of the cognitive system are revealed via the semantic and pragmatic features of verbs of understanding,

b) the study of the process of understanding is one of the disputable questions in modern linguistics, so this thesis provides all-round analysis, describes this process from different angles.

The **novelty** of the research is determined by the fact that for the first time an attempt has been made to carry out a comprehensive study of verbs of understanding in the light of Cognitive Linguistics, reveal the semantic and pragmatic features of all the verbs under study, as well as the cognitive models of the process of understanding.

The research consists of an introduction, two chapters, a conclusion and a bibliography.

The **introduction** presents the main aim and tasks of the research, its relevance, scientific novelty, theoretical significance and practical value, the main hypotheses of the research.

**Chapter One – Understanding in the Context of Linguistic Investigations** – is devoted to the study of various approaches to the process of understanding. Understanding is viewed in the light of Cognitive Linguistics, Semantics and Pragmatics. Within the framework of the research understanding is described as a multilayer and multilevel process, with the human being in the center of this mental activity. Understanding is presented as a complex of various mental processes regularly following one another.

**Chapter Two – Semantic and Pragmatic Peculiarities of English Verbs of Understanding** – reveals cognitive, semantic and pragmatic peculiarities of the verbs in question. It is devoted to the study of the correlation between the two processes: those of understanding and revealing the truth. It is shown that understanding is closely related to and interconnected with the concepts of truth and depth. Understanding is described as reaching the truth, while the truth is situated in the depth.

Understanding is presented as an expression of cognitive metaphor being based on the physical experience. On the example of verbs of understanding it is shown that, similar to other abstract concepts, understanding is embodied. The process of understanding is viewed in the light of sensual perceptions. On the basis of both English and Armenian verbs of perception it is shown that this mental activity is preconditioned by seeing, hearing and tactile perception.

The thesis deals with the study of understanding as mental movement, directly associated with deixis. So, the term *movement* is used in the widest sense and is applicable to all the verbs of understanding. The deictic character of the verbs and the cognitive process itself is substantiated via the perception of the process of understanding as metaphorical, abstract movement. The location of the deictic center of the mental movement is revealed via markers denoting the depth of understanding.

The study also shows that the process of understanding necessarily requires evaluation of the communicated information and is emotionally coloured. The deictic character of understanding is grounded from the perspectives of sensitivity. Emotion, evaluation and attitude are closely associated with understanding and correlate with a certain center. So, the evaluation of understanding takes place in relation to that center.

The **conclusion** summarizes the main findings of the research.

**ДИАНА ИВАНОВНА МОССЕЯН**

**СЕМАНТИЧЕСКИЕ И ПРАГМАТИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ  
АНГЛИЙСКИХ ГЛАГОЛОВ ПОНИМАНИЯ  
(В СОПОСТАВЛЕНИИ С АРМЯНСКИМ)**

**РЕЗЮМЕ**

Изучение языковых единиц в свете когнитивной лингвистики представляет большой интерес среди исследователей, поскольку позволяет выявить модели, отражающие когнитивную систему человека. В современных лингвистических исследованиях изучение различных когнитивных процессов и явлений, таких как объяснение, интерпретация, восприятие, понимание, является перспективным.

Реферируемая диссертация посвящена исследованию когнитивных, семантических и прагматических особенностей глаголов понимания. Понимание является основой и конечной целью любой коммуникации. Любая коммуникация передает некое значение, предполагает некоторое намерение со стороны говорящего. Соответственно, понимание напрямую связано с выявлением того самого значения и намерения.

**Целью** диссертации является выявление когнитивных, семантических и прагматических особенностей английских глаголов понимания, а также описание необходимых условий, предопределяющих осуществление самого процесса понимания, изучение тех явлений, которые непосредственно связаны с процессом понимания, и определение того, как эти явления соотносятся с данным процессом.

**Новизна** диссертации определяется тем, что в ней впервые проведено комплексное и всестороннее исследование глаголов понимания на основе положений когнитивной лингвистики, определен семантический и прагматический потенциал всех, включенных в исследование, глаголов понимания, посредством которых выявлены когнитивные модели процесса понимания.

Диссертация состоит из введения, двух глав, заключения и списка использованной литературы.

**Во введении** определяются цели и задачи исследования, его актуальность и научная новизна, теоретическая значимость и практическая ценность, формулируются основные положения, выносимые на защиту.

**Первая глава** – «**Понимание в контексте лингвистических исследований**» – посвящена изучению разных подходов к процессу понимания. Понимание рассматривается в свете когнитивной лингвистики, семантики и прагматики.

Через выявление характерных сторон сложного процесса понимания в рамках диссертации дается его определение. Понимание представляется как многоуровневое и многоступенчатое явление, в центре которого находится человек. Понимание представлено как совокупность различных ментальных

процессов, регулярно чередующихся друг с другом. Определены лингвопрагматические компоненты, влияющие на процесс понимания и предопределяющие глубину и уровень понимания.

**Во второй главе – «Семантические и прагматические свойства английских глаголов понимания»** – выявляются когнитивные, семантические и прагматические особенности глаголов понимания.

Данная глава посвящена изучению корреляции между процессом понимания и выявлением истины. Опираясь на словарные дефиниции и контексты употребления английских глаголов понимания, показано, что понимание тесно взаимосвязано с понятиями истины и глубины. Понимание описывается как постижение истины, а истина имеет глубинный характер.

Понимание есть проявление когнитивной метафоры, в основе которой в первую очередь лежит физический опыт. На примере английских и армянских глаголов восприятия выявлено, что понимание, подобно другим абстрактным явлениям, материально. Процесс понимания рассматривается в свете чувственного восприятия. Основными предпосылками понимания являются зрение, слух, осознание.

В диссертации понимание описывается как движение, которое непосредственно ассоциируется с дейктичностью. В результате переосмыслиения понятия движения, процесс понимания характеризуется как метафорическое, абстрактное движение. Термин *движение* употребляется в самом широком смысле этого слова и применим ко всем глаголам понимания. Выявленный в семантике изучаемых глаголов компонент движения, а также контекстуальные маркеры «степени понимания» обосновывают дейктичность понимания.

Согласно полученным данным, процесс понимания эмоционально маркирован и с неизбежностью включает в себя оценивание передаваемой информации, отношение к передаваемой информации. Дейктичность понимания также обосновывается с точки зрения чувственности. Эмоции, оценка, отношение, тесно связанные с процессом понимания, соотносятся с некоторой точкой отсчета. Исходя из соотношения к этой точке, субъект понимания оценивает понимание, выраженное данным глаголом.

**В заключении** даются основные выводы исследования.





